



# Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

## ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒՔՅԱՆ ՏԱՃԱՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՔՅՈՒՆԵՐ



այս Արոտի պաշտօնաբերք «էջմիածին» ամսագրի սույն համարի սկզբում տպագրվում է վեհափառ Հայրապետի ապրիլ 30 թվակիր սրբատառ կեռապար, երուտաղեմի Ս. Հարություն Տաճարի նորոգության առթիվ, որը միաժամանակ հայրապետական սրտագին կոչ է՝ ուղղված «ՀԱՄԱՅՆ ՄԵՐԱԶՆ ԺՈՂՈՎՈՐԳԻՆ», «ՄԻՐՈՑ ՀԱԿՈՅԱՆՑ ԶԻՆՎՈՐՅԱԼ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԵՐ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՒՆԵՐՈՒՆ ՈՒ ՄԵՐ ԲՈՂՈՐ ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐՈՒՆ, ՈՐՊԵՍՁԻ ԱՆՀԱՊԱՂ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՑՆԻՆ ՈՒ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԶԱՆՔԵՐՈՎ ԱժԱՆԴԱԿԵՆ ԱՅՍ ՆՊԱՏԱԿՈՎ ՍԿԶԲՆԱՎՈՐՎՈՂ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ՈՐ ՊԻՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԻ ՊԱՏՐԻԱՐՔ ՄԵՐ ՆՂՐՈՐԻ Տ. ՆՂԻՇԵ ՍՐԲԱՋԱՆ ԱՐՔԵՊՈՍԿՈՊՈՍԻ ԿԼԵԱՎՈՐՈՒԹՅԱՄ»:

Վեհափառ Հայրապետը, քաղցմանը հանգիստանալով բովանդակ հայ հավատացյալ ժողովրդի զգացմունքների դեպի երուտաղեմի հայոց Պատրիարքությունը, դեպի ազգային այս մեծ ճանր և ժառանգությունը, որը «ՔՐԻՍՏՈՍԱՏԵՍՍ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱՇՆԻ ԿՈՂՔԻՆ», «ԿՀԱՆԴԻՍԱՆԱ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ՈՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՐԳԻՆ ՀՈԳԵՎՈՐ-ԻՄԱՑԱԿԱՆ ԿԱՅՍՈՒՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԵՐՆԵ ՄԻՆ», կառուցությանը շնչտամ է; որ Ս. Հարություն Տաճարի նորոգության հարցը սրբական պարտականությունն է հայ ժողովրդի, որը միշտ իր գերագույնը կատարել է՝ վառ ու պայծառ պանելու համար համազգային այս հաստատությունը. «ՄԵՐ ԱՌԻՍՏՐԱԿ ՆԱԽ-

նիք եՎ ՔԱԶԱԿՈՐՈՎ ՀԱՅՐԱՊԵՏՆԵՐԻ, ԵՐԲԵՄՆ ԻՐԵՆՑ ԿՅԱՆՔԻ ԻՍԿ ԿՆՈՎ, ՊԱՀՊԱՆԱՍ ԵՆ ՏԻՐԱԲԱՐ ՈՒ ԵՄՂԿՅԱԼ ՊԱՀԱՍ, ՄԵԶԻ ԱՅՍՈՐՎԱՆՆԵՐՈՒՍ ԹՈՂԼՈՎ ՍՐԲԱՋԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ ՄՐ, ՈՐ ԲՈՂՈՐԻ ՀԱՄԱՐ ՈՒՆԻ ՀՈԳԵՎՈՐ ԵՎ ԱԶԻԱՅԻՆ ԱՆՓՈԽԱՐԻՆԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ, ՀԱՅ ԵԿԵՂԵՑՎՈ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԻՐՔԻՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՒՆ ԱՌՈՒՄՈՎ»:

Երուտաղեմը միշտ ունեցել է իր տազնապի, նեղության օրերը: Պատմության քննադատում Հայ երուտաղեմի գլխով են անցել փոքրիկներ ու մեծիկներ: Բայց հայ ժողովուրդը միշտ բարոյապես, էյոթապես օժանդակել է համազգային այս հաստատության և իր սրտաբուխ նվիրատվությամբ, կանգուն ու պայծառ պանել ազգային և կրոնական մեծ աբձեֆ ներկայացնող այս հաստատությունը:

Այժմ նորից երուտաղեմի հայոց Պատրիարքությունը պետք ունի հայ ժողովրդի սրտաբուխ նվիրատվության, բերելու համար իր բաժինը Ս. Հարության Տաճարի նորոգության ծախսերին:

«ԱՀԱ ԹԵ ԻՆՑՈՒՆ, — հրահանգում է վեհափառ Հայրապետը, — բոլորիս սեպուհ ՊԱՐՏՔԻՆ Է՛ ՇԱՐՈՒՆԱԿԵԼ ՄԵՐ ՆԱԽՆՅԱՅ ՍՐԲԱՋԱՆ ԿՈՐԾԷ՛ ԵՎ ԱՄՈՒՐ ՊԱՀՊԱՆԵԼ ՀԱՅ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ԿՐՈՆԱԿԱՆ ՈՒ ԱԶԻԱՅԻՆ ԱՅԴ ՄՆԾ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ»:

Երուտաղեմը բացառիկ հանգամանք է ներկայացնում մանավանդ քրիստոնեական աղջ աշխարհի համար, որպես Քրիստոսի

կյանքի ճիշտակերտով, մահվան և հարու-  
 թյան դեպքերով նվիրագործված Ս. ՆԻՊՈՒՆՆԻՍԻ  
 Դ ղարի սկզբներին, երբ հոռմեական  
 կայսրության մեջ պետական կրոնը հռչակ-  
 վեց Բրիտանոնությունը, Ս. Երկրում փառա-  
 վառ տանալներ, պատմական կորոզներ  
 կառուցվեցին՝ Քրիստոսի կյանքի հետ կապ  
 ունեցող ամենանվիրական վայրերի վրա,  
 ինչպիսիք էին Ս. Սենդյան հռչակապ բա-  
 ճարք Երուսաղեմում, Ալլակերպության եկե-  
 ղեցին Գալիլիայում Քաբոռ լեռան վրա և  
 այլուր:

Երուսաղեմը այսպիսով դարձավ պատ-  
 մական սրբավայրերի, տանալների, վան-  
 քերի մի սուրբ աշխարհ:

Այդ հռչակապ սրբավայրերից հնագույնն  
 է այս օրերին վերանորոգվող Ս. Հարու-  
 թյան հսկա, գմբեթազարդ Տանարը, կա-  
 ռուցված Քրիստոսի չարչարաններին, յա-  
 շխության և հարության նվիրական վայրե-  
 րի վրա:

Ս. Երկրում առաջին սրբավայրերի կառու-  
 ցումը բարձրանում է մինչև 325 թվականը,  
 Կոստանդիանոս կայսեր և իր աստվածա-  
 սեր սուր՝ 2եղինեթ քաղաքում օրերը:

Երուսաղեմում Բրիտանոնական առաջին  
 սրբավայրերի շինությունը ու պահպանության  
 հետ պատմականորեն կապված է եղել նաև  
 հայ ժողովրդի անունը:

Է ղարի պատմիչ Հերակլոսիցի Անաստաս  
 վարդապետը, յոր Համագասպ Կամսարա-  
 կան իշխանի խնդրանքով այցելել է Ս. Եր-  
 կրը, վկայում է իր «վասն վանորէից Հայոց  
 որ յԵրուսաղէմ» գրքում, որ հայերը եույն  
 դարում Ս. Երկրում ունեին 70 վանքեր, շին-  
 ված «ի ժամանակս քաղաքուրեան Տրդա-  
 տայ և ի հայրապետութեան Սրբոյն Գրիգորի  
 Լուսաւորչին... վանորայք ի սուրբ Լա-  
 դաճն Երուսաղէմ, ի տեղիս տնօրինակա-  
 նացն Քրիստոսի և յայլ աստուածակօխ տե-  
 ղիսն: Եւ գմեծամեծ եկեղեցիքն, գԳողոթքա,  
 զՍ. Յակօրն, զՀրեշտակապետն և զՓրկիչն,  
 զՄնուեղն, զՎերնատունն և զՀամբարձումն,  
 զՃառներն և զԳիտ Խաչն, զԽորանն Լուսա-  
 ւորչին և զաստուածընկալ Գերեզմանն, շի-  
 նեալ ի քաղաքէն Տրդատայ և ի Սրբոյն  
 Գրիգորէ Լուսաւորչէ»:

Սովսես Կաղանկայտվացի պատմիչը (Ժ  
 դար) և այլ հիշատակագիրներ եույնպես  
 վկայում են, որ Ս. Երկրում առաջին հայ  
 վանքերի շինությունը բարձրանում է մինչև  
 Լուսավորչի և Տրդատի օրերը:

Այդ պատմական սրբավայրերի շինու-  
 թյան մասնակցել են հայրապետն ու քաղա-  
 վորը, հայ նախարարն ու շինականը, հայ  
 արվեստագետն ու բարեկաշտը, «ի Փրկչի»

Թիւն ՀՈԳՈՅ ԵՒ Ի ՅԻՇԱՏԱԿ ԱԶԳԻՍ ՀԱ-  
 ՅՈՅ»:

Երուսաղեմում հայ հնագորյան վանքերի,  
 կրօնական, մշակութային հաստատություն-  
 ների գոյությունը ինքնին պերճախոս վկան  
 է և պատմական ապացույցը Երուսաղեմում  
 Հայ եկեղեցու գրաված բարձր դիրքի և հայ  
 մշակույթի զարգացման Ս. Երկրում:

Վերանորոգվող Ս. Հարության Տանարը  
 ինքնիւր մեջ քաղաքիվ տնօրինական սրբա-  
 վայրերի, աղաքատեղիների, մատուռների  
 մի ամբողջություն է, որն իր մեջ նիմնա-  
 կանում բովանդակում է Քրիստոսի Ս. Կե-  
 ռեզմանը. Կողոթքան, Երեման պարտեզը,  
 Գյուտ Խաչը, Պատառատեղին և հայոց պատ-  
 կանող Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին և  
 այլ մատուռներ:

Ս. Հարության Տանարը Բրիտանոնական  
 միջազգային սրբավայր է: Տանարի «գլխա-  
 վոր պահապանները» և իրավատերերն են  
 Երուսաղեմի հայերի, եույնների և լատինե-  
 րի Պատրիարքությունները:

Ս. Երկրում, Բրիտանոնական այդ միջազ-  
 գային սրբավայրում, երկու մեծագույն եկե-  
 ղեցիներին՝ եույն օրթոդոքսների և հոռմեա-  
 կան կաթոլիկների հետ Հայ եկեղեցու գրա-  
 ված դիրքը՝ հայ ժողովրդի հավատի բարու-  
 թյան և կրօնական կենսունակության ապա-  
 ցույցն է, միաժամանակ ազգային արդար  
 հպարտության և հոգևոր մխիթարության  
 անսպառ աղբյուրը:

Տասնյոթ դարի հեույրուն ունեցող Ս. Հա-  
 րության այս Տանարի գլխով անցել են շատ  
 փոքորիկներ: 325 թվականին կառուցված  
 Տանարը դարերի ընթացքում Լեթարկվել է  
 բնական և ֆաղաճական փոքորիկների  
 պատճառած սվերածությանց: 614 թվակա-  
 նին պարսիկները ֆանդեցին Տանարը, որը  
 ֆիչ հետո վերաշինվեց Մոսուստոս պատրի-  
 արքի կողմից: 1009 թվականին Ֆարսիյան  
 ալ-Հաֆիմ խալիֆան մուսուսագոյությամբ հիմ-  
 նանառակ արեց Տանարը, որը եուրից վերա-  
 շինվեց մասամբ 1048 թվականին, Կոստան-  
 դիանոս Մոնոմախոս կայսեր կողմից: 1099  
 թվականին, խաչակիրների շրջանին, Ս. Հա-  
 րության Տանարը երթարկվեց հիմնական  
 վերաշինության՝ իր այժմյան վիճակով:

1800 թվականին հրդեհը մեծ վնասներ  
 պատճառեց Տանարի հարտարապետական  
 կառուցվածքին, իսկ 1927 թվականի երկրա-  
 շարժի ցնցման հետևանքով ենդլեթ բացվե-  
 ցին Տանարը վեր բուռող սյուների վրա (տե՛ս  
 Մկրտիչ Կիսկոպոս Աղավունի, «Ս. Երկ-  
 րին ավանդությունները», Երուսաղեմ, 1936,  
 էջ 3—4):

Ս. Հարության Տանարի եուրոգության հար-  
 ցը հին է և ունի իր պատմությունը: Տարբեր

ժամանակներում նարտարապետական Իրենություններն ու տեղեկագրերը անհրաժեշտ դարձրին հիմնական վերանորոգումներից առաջ «երկարյա և փայտյա նեցուկներով գորավիզ ըլլալ շենիին, արգիլելու անոր տարվետարի անող և փլուզումի գացող Լալբալումբ: Ճարտարապետների քելագությանց համաձայն, իրագործվեց եղած առաջարկը և 1927 թվականի երկրաշարժից հետո Տանարի վտանգված մասերը ամրացվեցին երկաթյա և փայտյա մույրերով. «որոնք մինչև հիմա կմնան»:

Այնուհետև հաջորդ տարիներին և մանավանդ վերջերս նշտվեցին, երեք պատրիարհարանների հարտարապետների միասնական ֆնեությամբ, Տանարի վերանորոգության վերաբերող հիմնական հարցերը:

Իրավատեր երեք պատրիարհություններ համաձայնվել են, որ «այն մասերը Տանարին, որոնք յուրաքանչյուր հարանվանության առանձին սեփականություն կնկատվին և ենթակա են իր իրավասության, հետաքրքրվող հարանվանությունը ինքն պիտի հայթայթեն վերաշինման ծախսը: Իսկ այն մասերը, որոնք հասարակաց սեփականություն ղեղունված են, երեք պատրիարհարանները հավասար իրավունքներով և ծախսով պիտի բերեն իրենց մասնակցությունը» («Արև», 1961 հոկտեմբեր—նոյեմբեր, էջ 275, խմբագրական):

Ա. Հարության Տանարի վերանորոգության բնդհանուր ծախսը նախատեսվում է մոտավորապես 750 000 ստեղիկեց, համաձայն նարտարապետների նախահաշվի: «Հայոց Պատրիարհարանը, իբրև մին երեք գլխավոր հարանվանություններեն, որոնք սեփականության իրավունք ունին աշխարհամատուռ և սլատմական Տանարին մեջ, վերահիշյալ ծախսուց զուտարին մեկ երոտորը, 250 000 ստեղիկեց հոգալու հարկին ներև են, կարևոր ապահովելու իրենց տասնվեց դարեր

ի վեր այս Տանարին մեջ ունեցած եկեղեցական և ազգային իրավունքներ...:

Ինչպես կհետևի, այս դարավոր ու պատմական կարևորություն ունեցող եկեղեցիին մեջ կարենալ պահելու մեր սեփականության իրավունքը, պարտինք կարենալ հունաց և լատինաց Պատրիարհարաններուն հետ հավասար բաժիններով բերելու մեր մասնակցությունը վերաշինության գործին: Ասիկա կհնարական հարց մըն է մեր գոյության իրավունքը պահելու համար, որովհետև պատրիարհական մեր իրավունքները կբխին Ս. Տեղյաց մեջ մեր ունեցած իրավասություններեն» (նույն տեղում):

Ս. Հարության Տանարի նորոգության մասնակցության հարցը, ինչպես շեշտում է Վեհափառ Հայրապետը Իր սրբատառ կոնդակում, ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑ է, ՊՈՎԱԿԱՆԱՆ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՎԻ, ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՊԱՐՏՈՒԹՅԱՆ, ՀԱՎԱՏԻ ԿԵՆՍՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ է:

«ԱՆԳԱՄ ՄՐ ԵՎՍ, ԵՎ ԱԶԳՈՎՐԻՆ ՑՈՒՅՑ ՏԱՆՔ,—գրում է Վեհափառ Հայրապետը,— Թե ՈԳԵԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐ ԳԱՎԱՆՈՂ ԵՎ ՄԵՐ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՇԱՀԵՐՈՒ ԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆՆՈՒՆՆԵՑՈՂ ԺՈՂՈՎՐԴ ԵՆՔ: ՀԱՄՐԱՆՔՈՎ ՓՈՔՐ ՄԵՐ ԱԶԳԻՆ ՓԱՌՔԻ ՏԻՏՂՈՍՐ ԱՅՍ ԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԻՍԿ է»: «ԱՄՐԱՑՆԵՔ ՈՒ ԱՆՇԱՐԺ ԵՎ ՇԵՆ ՊԱՀԵՆՔ ԱՅՊ Ս. ԱԹՈՒՐԸ,—հրահանգում է Վեհափառ Հայրապետը:

Նորին Ս. Օծությունը, Մայր Աթոռ Ս. Էջմիածինը խորապես վստահ են, որ հայ ժողովուրդը, որպես դարավոր երեք իրավատերերից մեկը բռնապետական միջազգային այդ սրբավայրի, որ նուսաղեմում Ս. Հարության պատմական Տանարն է, կանց չի առնի նյութական ո՛չ մի զոհողության առաջ, գոյացնելու համար այդ դարավոր սրբավայրի բնդհանուր վերանորոգման ծախսերի իրեն բնկած բաժինը:

